Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1014[1]-01.06.2016-ՊԻ-010/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ մասով.

«11. Եթե հարկադիր աճուրդի արդյունքում անձի միակ բնակարան հանդիսացող լոտը չի վաճառվում, և կրկնակի հարկադիր աճուրդ կազմակերպելու դեպքում լոտի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է դառնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից, ապա լոտը հանվում է հարկադիր աճուրդից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

**Հոդված 2.** Օրենքի 35.4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ մասով.

«10. Եթե հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում անձի միակ բնակարան հանդիսացող լոտը չի վաճառվում, և կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդ կազմակերպելու դեպքում լոտի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է դառնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից, ապա լոտը հանվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

**Հոդված 3.** Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո:

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կատարողական վարույթների նկատմամբ:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ**

| Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ձհանգիրյան | «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անցումային դրույթներ | Նախատեսել համապատասխան կարգավորում օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության կողմից միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարի սահմանման վերաբերյալ: | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: |
| ՀՀ կառավարություն | «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հոդված 1: | Նկատի ունենալով, որ լոտի մեկնարկային գինը լոտի գնահատված արժեքի 75 %-ն է, իսկ բնակարանը յուրաքանչյուր կրկնակի աճուրդի դրվելու դեպքում նորից չի գնահատվում, այլ նվազեցվում է դրա մեկնարկային գինը, առաջարկվում է սահմանել, որ լոտը հանվում է հարկադիր աճուրդից, եթե կրկնակի աճուրդի *լոտի մեկնարկային գինը* հավասար կամ ցածր է ՀՀ կառավարության կողմից սահմանված | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |

| | | | |
|---|---|---|---|
| | | միակ բնակարանի իրացման համար նախատեսված գումարից: | |